


ОБРАЗОВАНИЕ

«Եվագր Պոնտացի» թեմայի դասավանդման առանձնահատկությունները

Գրիգորյան Աշխեն Կ.

պ.գ.թ., դասախոս, Հայագիտության ամբիոն, Թարգմանության ֆակուլտետ
Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0006-2558-4454>
grigoryanashkhen@mail.ru

ՀՏԳ՝ 27-1; EDN: OIVLKC

DOI: 10.58587/18292437-2024.6-143

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ միջնադարյան հայ մատենագրություն, հետազոտություն, մեթոդ, խորհրդապաշտություն

Особенности преподавания темы «Евагрий Понтийский»

Григорян Ашхен К.

кандидат исторических наук, преподаватель, Кафедра арменоведения, Факультет перевода, Государственный университет имени В.Я. Брюсова (Ереван, РА)

Аннотация. «Наука — это исключительно поиск». Евагрий Понтийский. Писатель и богослов четвертого века Евагрий Понтийский занимает уникальное место в истории общецерковной, а также армянской церкви, с богатым литературным наследием. Его труды получили широкое распространение в армянском средневековье, начиная с V века. Цель данной статьи – представить методику преподавания темы «Евагрий Понтийский», показать, какие цели, проблемы и конечные результаты можно определить для обучения темы, исследовательской работы и научных дискуссий, для того, чтобы подталкивать студентов к «научным» поискам» к многослойному полю изучения церковной истории и богословия.

Ключевые слова и словосочетания: Средневековая армянская литература, исследование, метод, мистика

The Features of the Teaching of the Theme “Evagrius Ponticus”

Grigoryan Ashkhen K.

PhD in History, Lecturer, Chair of Armenian Studies, Faculty of Translation (TF) Brusov State University (Yerevan, RA)

Abstract. “Science is an exclusively a research,” - Evagrius Ponticus. The author and a theologian of the IV century Evagrius Ponticus has a unique place in the history of the church, including the Armenian church, with it's rich literary heritage. It's works, have been widely distributed in the Armenian Middle Ages since the fifth century. The purpose of this article is to present the methodology, description, and importance of teaching the topic of “Evagrius Ponticus” to show what goals, objectives, and outcomes can be set, to conduct research, and to organize discussions on the topic in question, which will encourage students to engage in “scientific searches” towards the study of church history and theology.

Keywords & phrases: Medieval Armenian literature, research, method, mysticism

«Գիտությունը բացառապես փնտրույք է», -
Եվագր Պոնտացի:

Ընդհանուր եկեղեցու, նաև՝ Հայ եկեղեցու պատմության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում չորրորդ դարի մատենագիր, աստվածաբան Եվագր Պոնտացին՝ իր թողած հարուստ գրական ժառանգությամբ: Նրա աշխատությունները լայն տարածում են ունեցել հայկական միջնադարում դեռ հինգերորդ դարից: Երևանի Մաշտոցի Մատենադարանում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության, Երուսաղեմի Սրբոց Հակոբեանց վանքի ձեռագրատներում պահպանվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնցում զետեղված են Եվագր Պոնտացու

երկերի հայերեն թարգմանությունները և մեկնությունները: Եվագր Պոնտացու գործերն ընդգրկված են եղել միջնադարյան Հայաստանի վարդապետարաններում ուսուցանվող երկերի շարքում, նրա ուսմունքը նպաստել է հայ աստվածաբանական մտքի զարգացմանը, օգտագործվել քաղքեղոնականության դեմ մղվող դավանաբանական պայքարում և վանական կյանքի կազմակերպման գործում:

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան «Եվագր Պոնտացի» թեմայի դասավանդման հիմնական սկզբունքների վերլուծությունն է: Այն ունի տեսական և գործնական/կիրառական նշանակություն, քանի որ միջնադարագիտության և աստվածաբանության բնագա-

վառներում թեման ուսումնասիրվում է «Հայրաբանություն», «Հայ միջնադարյան մատենագրություն», «Ընդհանուր եկեղեցու պատմություն», «Խորհրդապաշտական աստվածաբանություն», «Վանականության պատմություն», նաև՝ «Հայ եկեղեցու պատմություն» դասընթացների շրջանակներում:

Հոդվածի նպատակն է ներկայացնել «Եվագր Պոնտացի» թեմայի դասավանդման նկարագիրը, ցույց տալ, թե ինչ խնդիրներ և վերջնարդյունքներ կարելի է սահմանել, ինքնուրույն հետազոտական աշխատանքներ իրականացնել և գիտական քննարկումներ կազմակերպել, որը սովորողներին կմղի «գիտական փնտրտուքների»՝ դեպի եկեղեցու պատմության և աստվածաբանության ուսումնասիրության բազմաշերտ ոլորտ:

«Եվագր Պոնտացի» թեմայի դասավանդման նպատակն ու խնդիրները՝

- սովորողներին հաղորդել հիմնարար և համակարգված գիտելիքներ Եվագր Պոնտացու կենսագրության և գրական ժառանգության վերաբերյալ՝ ի մի բերելով միջնադարյան տարաբնույթ աղբյուրների և հրապարակում եղած ուսումնասիրությունների տեղեկությունները,

- քննել և պագարանել Եվագր Պոնտացու գործերի հայերեն թարգմանությունների ժամանակին ու հեղինակային պատկանելությանն առնչվող հարցերը, քննարկել նրա երկերի ազդեցությունը հայ միջնադարյան մատենագրության մեջ,

- խրախուսել և զարգացնել սովորողների ինքնուրույն հետազոտություններ կատարելու հմտությունները,

- քննարկումների ու վերլուծությունների միջոցով զարգացնել սվորողի մտածական կարողությունները, ձևավորել և համակարգել՝ ինքնուրույն համեմատություններ, ընդհանրացումներ և եզրահանգումներ կատարելու հմտությունը,

- ծանոթացնել քննվող նյութի վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուրներին:

Թեմայի ուսումնառության վերջնարդյունքները՝

- քննել խորհրդապաշտական աստվածաբանության և վանականության հիմնական գծերը, ներկայացնել Եվագր Պոնտացուն՝ որպես խորհրդապաշտ-ճգնակյաց,

- ներկայացնել Եվագր Պոնտացու գրական ժառանգությունը, կառուցել փաստարկված բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հետազոտությունների միջոցով,

- բացատրել աստվածաբանական-դավանաբանական եզրույթները, ներկայացնել դրանց ծագումը և կիրառումը, որոնք առնչվում են «Եվագր Պոնտացի» թեմային,

- վերլուծել Պոնտացու «մեղքերի վարդապետությունն» ու «աղոթքի մասին ուսմունքը»,

- արժևորել Եվագր Պոնտացու հայերեն թարգմանությունների, երբեմն որպես բնագրերի միակ վկայության դերն այսօր միջնադարագիտության բնագավառում:

Գործնական/մասնագիտական կարողություններ՝

- վերլուծել և եզրահանգումներ կատարել՝ հենվելով հայ և օտարալեզու աղբյուրներից հավաքագրած տեղեկատվության վրա,

- խմբային աշխատանքում կրել պատասխանատվություն թիմի անդամների համար,

- ստացած գիտելիքները կիրառել հետագա մասնագիտական գործունեության իրականացման մեջ:

Ընդհանրական/փոխանցելի կարողություններ՝

- օգտվել տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակել և ներկայացնել տեղեկատվությունը,

- կիրառել գիտելիքները գիտական քննարկումների ժամանակ:

Ուսումնառության մեթոդական հարցեր. Դասընթացը բաղկացած է տեսական և գործնական մասերից: Թեմայի դասավանդման մեջ օգտագործվում են և՛ ավանդական և՛ փոխներգործուն մեթոդներ, հնարներ և եղանակներ՝ դասախոսություն, գրույցի մեթոդ, հարցուպատասխան, սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների ընթերցում և լսարանային քննարկում, վերլուծություն, քննական-համեմատական մեթոդի կիրառում, ինքնուրույն (անհատական և խմբային) հետազոտական աշխատանք: Վերջինն իրականացվում է գործնական փուլում և ենթադրում է աշխատանք աղբյուրների հետ՝ դասախոսի կողմից համեմարարված թեմաների և առաջադրված հետազոտական հարցերի շուրջ:

Սովորողներին տրամադրվում է թեմային առնչվող ընթացիկ նյութ: Դասախոսությունները կազմակերպվում են լսարանային խոսք-ունկնդրում մեթոդի միջոցով, յուրաքանչյուր ենթաթեմայի հաղորդման ավարտին կազմակերպվում է հարցուպատասխան և անհատականալի հարցերի շուրջ քննարկում, որը նպաստում է սովորողների՝ դասապրոցեսի մեջ ներգրավվածությանը: Դասախոսության ավարտին կարելի է ընթերցել Եվագր Պոնտացու խրատներից և վերլուծել դրանք:

«Եվագր Պոնտացի» թեմայի համառոտ բովանդակությունը.

● *Եվագր Պոնտացու կենսագրությունը, Պոնտացին՝ վանական-խորհրդապաշտ.* Եվագր Պոնտացին ազգությամբ հույն է, ծնվել է մոտ 345 թ., մահացել՝ 399 թ.: Նրա կյանքի և գործունեության վրա մեծապես ազդել են նրա բարեկամական հարաբերությունները Գրիգոր Աստ-

վաճառանի, Բարսեղ Կեսարացու, Մակար Եգիպտացու և Մակար Ալեքսանդրացու հետ: Չորրորդ դարում վանական շարժումը մեծ թափ է առել: Պոնտացին վանականության ակա-նավոր ներկայացուցիչներից է. հրաժարվելով աշխարհիկ կյանքից, նա, շուրջ տանյոթ տարի անցկացրել է եգիպտական անապատում՝ ապրե-լով աղոթքներով և ճգնությամբ: Նա առաջին ուսյալ վանականներից է. իր աստվածաբանու-թյան մեջ Եվագրը կրում է հունական փիլի-սոփայության, պլատոնական գաղափարների ազդեցությունը: Եվագրին համարում են վանա-կանության առաջին տեսաբաններից [10, էջ 14]: Պոնտացու խորհրդապաշտական հայացքների առանցքում աստվածանաչողությունն է: Կրո-նական կյանքի կենտրոնական գաղափարը Աստծո և մարդու հարաբերությունն է, Աստծո հետ հաղորդակցումը՝ «աստվածացումը» («թեո-սիս»), որն ունի խորհրդավոր բնույթ [12]: Խոր-հրդապաշտության վերացարկված-մտահայեցո-ղական ուղղությունը շեշտադրում է իմացու-թյունը, Աստվածացման ուղին բաժանելով երեք փուլերի՝ մաքրագործում, լուսավորություն, կատարելագործում: Մյուս՝ բարոյա-գործնական ուղղությունն առաջին պլան է մղում «Աստծո նկատմամբ խորհրդական սիրով աստվածա-ցումը», որի հիմնական փուլերն են՝ փորձը (պրակսիս՝ գործնական) և հայեցողությունը (թեորիս՝ տեսական): Պրակսիսը մի կողմից սխրանքն ու ճգնակեցությունն է, մյուս կողմից՝ բարեգործությունը կամ բարոյական պահը [9, էջ 52]: Եվագր Պոնտացին համադրել է այս սկզբունքները՝ իմացությունը և սերը: Նա առաջ-նորդվում էր այն գաղափարով, որ լինել իմաս-տուն, նշանակում է լինել առաքինի:

Հայկական ձեռագրերում պահպանվել է «Վասն Եվագրի» կենսագրական «Ուսանավոր»-ը [1]:

• *Եվագր Պոնտացու գրական ժառանգու-թյունը, երկերի հայերեն թարգմանությունն ու ազդեցությունը հայ մատենագրության վրա.* Եվագր Պոնտացու աշխատություններում «Վա-նական (Պրակտիկ) Հոգևոր գործերի մասին», «Մտահայեցող (Գնոստիկ)», «Մտահայեցո-ղական գլուխներ (Գնոստիկյան գլուխներ)», «Հայելի միանձանց և միանձնուհիների», «Վա-նական կյանքի հիմունքներ», «Աղոթքի մասին», «Չար ութ խորհուրդների մասին», «Թղթեր» (շուրջ 64) և այլն, քննարկվում են վանակա-նությանը և ճգնակեցությանը, մեղքերի տեսու-թյանը և քրիստոնեական առաքինությունների վերաբերող կարևոր դրույթներ, ինչպես նաև՝ դավանաբանական բնույթի տարբեր հարցեր:

Եվագր Պոնտացու աշխատությունների հայերեն թարգմանվել են երկու շրջանով. առաջին փուլը 5-րդ դարն է (հունարենից կատարված թարգմանությունների շարքում) [6,

էջեր 421-424]: Հայերեն թարգմանությունները երբեմն բնագրերի միակ վկայություններն են, քանի որ որոգինեսականության մեջ մեղա-դրվելու պատճառով, 553 թ.-ից հետո նրա գրա-կան ժառանգության որոշ հատվածը կորստյան է մատնվել: Հայ եկեղեցին նման դիրքորոշում չի ունեցել և այս հեղինակի մատենագրությունը եղել է ուսումնասիրվող և մեկնաբանվող աստվածաբանական գործերի շարքում: Հայերեն թարգմանությունների երկրորդ շրջանը 13-րդ դարն է: Հենվելով Մխիթար Այրիվանեցու Ճառ-ընտիրում պահպանված վկայության վրա՝ Պոն-տացու գործերը թարգմանվել են Վարդան վար-դապետի կողմից [2]: Վարդան վարդապետը, հավանաբար 13-րդ դարի մատենագիր Վարդան Արևելցին է, թարգմանվել է ասորերենից [3, էջ 323]:

Ինչպես վերը նշվեց, Եվագր Պոնտացու գրական ժառանգության նկատմամբ հետաքր-քրությունը պայմանավորված էր մի քանի հան-գամանքով՝ նրա խրատները և ուսմունքն օգտա-գործվում էին Հայաստանում վանականության շրջանում, վարդապետարանների ուսումնական ծրագրերում, եկեղեցու դավանաբանական պայ-քարում, ինչպես նաև, նրա գաղափարներն իրենց ազդեցությունն են թողել աստվածաբա-նական և փիլիսոփայական որոշ աշխատու-թյունների վրա:

Երկերի թարգմանությունները հայկական ձեռագրերում պահպանվել են առանձին մասե-րով՝ վերնագրվելով ըստ բովանդակության: Այսպես օրինակ, «Վանական (Պրակտիկ) - Հոգևոր գործերի մասին» գործը հայերեն թարգ-մանությամբ բաժանված է հետևյալ մասերի՝ «Եւագրեայ առ Անատոլ», «Վասն հանդերձից սուրբ հարցն», «Վասն ութ խորհրդոց», «Վասն այնոցիկ որ ընդ քուն ցնորք անցանեն», «Վասն հաստատութեան որ մերձ է յանախտութեան», «Վասն նշանակ անցաւութեան»: Բ. Սարգի-սյանի ուսումնասիրության մեջ ներկայացված են հայերեն թարգմանությունները [8]:

Եվագր Պոնտացու երկերի մեկնությունները կատարվել են հայ մատենագիրներ Գրիգոր Մեկնիչի (Գրիգոր Սկևռացի), Կիրակոս Երզն-կացու և Մատթեոս Ջուղայեցու կողմից:

Արժեքավոր է Պոնտացու կրոնա-աստվա-ծաբանական, փիլիսոփայական գործի՝ «Հարիւ-րաւորք վեցերորդք»-ի հայերեն թարգմանու-թյունը. բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ այս երկը հունարեն բնագրով պահ-պանվել է ընդամենը մի քանի գլուխ, իսկ հայե-րենով այն պահպանվել է ամբողջական տարբե-րակով [5, էջեր 74-78]: Կիրակոս Երզնկացու կողմից «Հարիւրաւորք վեցերորդք»-ի լուծմունքը գրվել է 1354 թ.: «Հարիւրաւորք վեցերորդք» լուծ-մունքի բնագրի հրատարակված է [4, էջ 230]:

• *Եվագր Պոնտացու «մեղքերի վարդապետությունն» ու «աղոթքի մասին ուսմունքը»*. Եվագր Եվագր Պոնտացու համարում են վանական միջավայրում մեղքերի մասին տեսության առաջին համակարգողը. նրա դասակարգմամբ ութ մեղքերը հետևյալն են. 1. որկրամոլություն, (որովայնամոլություն), 2. պոռնկություն, 3. արծաթասիրություն (ագահություն), 4. տրտմություն (տխրություն), 5. սրտմոլություն կամ բարկություն, 6. ձանձրություն (ձանձրոյթ), 7. նորափառություն կամ սնափառություն (փառասիրություն), 8. ամբարտավանություն (հպարտություն, ինքնահավանություն): Պոնտացու ընկալմամբ չարը ի հայտ է գալիս մարդու ազատ կամքի սխալ գործադրումից. չար է ամեն անկատարը, թերին: Մեղքերի դեմ պայքարի լավագույն զենքը քրիստոնեական առաքինություններն են: Մատթես Ջուդայեցին և Կիրակոս Երզնկացին, մեկնելով մեղքի մասին եվագրյան գաղափարներն, ութ մեղքերից յուրաքանչյուրը համարում են վտանգավոր քրիստոնյայի համար, քանի որ դրանք բոլորը կապված են միմյանց. մի մեղքից ծնվում է մյուսը և արատավորում մարդու հոգին ամբողջապես:

Պոնտացու գրչին պատկանող և Նեղոս Սինայեցուն վերագրված «Յաղագս աղօթից» գործի գլխավոր գաղափարը մտային աղոթքի գաղափարն է. աղոթքը մարդուն մերձեցնում է Աստծուն: Աղոթքի ժամանակ մաքրագործված միտքը հասնում է բացարձակ ինքնակենտրոնացման, «գրուցում Աստծու հետ»:

Եվագր Պոնտացու գաղափարների արտացոլումն ակնհայտորեն երևում է Նարեկյան դպրոցի միատիկ աստվածաբանության ներկայացուցիչների՝ Խոսրով Անձևացու, Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու երկերում: Անանիա Նարեկացին իր «Յաղագս զղջման և արտասուաց» իրատի վերջում նշում է հայրաբանական գրականության իր աղբյուրները, այդ թվում Եվագր Պոնտացուն [7, էջ 395]:

Ինքնություն հետազոտական աշխատանք՝ առաջադրված հետևյալ թեմաների ու հարցերի շուրջ.

ա/ «Համեմատել խորհրդապաշտական աստվածաբանության բարոյա-գործնական և վերացարկված մտահայեցողական ուղղությունները, բացատրել Պոնտացու մասին հետևյալ միտքը՝ «լինել իմաստուն, նշանակում է՝ լինել առաքինի»:

բ/ Վանական շարժման առանձնահատկությունները, ինչու՞ են ուսումնասիրողները Եվագր Պոնտացու աշխատությունները համարում հոգևոր կյանքի դասագրքեր [11, էջ 394]:

գ/ Հայկական միջնադարում Եվագր Պոնտացու գրական ժառանգությունը. ինչու՞ են կարևորվել Պոնտացու աշխատությունները, և որո՞նք են նրա երկերի հայերեն թարգմանություններն ու մեկնությունները:

դ/ Եվագր Պոնտացու «մեղքերի մասին վարդապետությունը». համեմատել այն «Յոթ մահացու մեղքերի ուսումունքի» հետ:

ե/ աղոթքի մասին եվագրյան ուսմունքը, անդրադառնալ հայ մատենագրության մեջ աղոթքի խորհրդապաշտական ընկալումներին:

Հետազոտական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվելու են բանավոր խոսքի միջոցով, որից հետո կազմակերպվելու են խնդրո առարկա հարցերի շուրջ քննարկումներ:

Ամփոփելով հոդվածը, պետք է նշել, որ «Եվագր Պոնտացի» թեմայի հետազոտությունն ու վերարժևորումն, ընդհանրապես, կարևոր է, քանի որ այս թեման բազմակողմանի և բազմաշերտ է՝ քննարկվող տարաբնույթ աստվածաբանական, պատմական, բանասիրական և այլ հարցերի տեսանկյունից: Արդիական և արժեքավոր է հայկական նյութի ներկայացումը միջազգային գիտական շրջանակներում: Միաժամանակ, Պոնտացու խորհրդապաշտական հայացքների և բարոյախրատական գաղափարների ճանաչողությունը մտային վարժանք է և հոգևոր կատարելագործման հորդոր մարդկանց համար:

Օգտագործված գրականության ցանկ

Չեռագրեր

1. Մաշտոցի անվ. Մատենադարանի Ձեռ. 642, (1671-1696 թթ), Ժողովածոյ, թ. 111 ա-114 բ:
2. Մաշտոցի անվ. Մատենադարանի Ձեռ. 1500 (13 թդ դ.), ճառընտիր, Մխիթար Այրիվանեցի, թ. 1041 ա:
3. **Անթապյան Փ.**, Վարդան Արևեցի. Կյանքն ու գործունեությունը: Գիրք Ա: – Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987: – 550 էջ:
4. **Բաղումյան, Ծ. վարդ. Չ.**, Կիրակոս Երզնկացու Սուրբ Եվագր Պոնտացու երկերի լուծմունքները: – Երևան, ՀԱԻ հրատ., 2022: – 296 էջ:
5. **Գրիգորյան Ա.**, Եվագր Պոնտացին հայ մատենագրության մեջ: (անտիպ ատենախոսություն: – Երևան, 2014 թ.):
6. **Չարբանայան Գ.**, Մատենադարան հայկական թարգմանութանց նախնեաց, (Դ-ԺԳ): – Վենետիկ, Ս. Ղազար, 1889: – 784 էջ:
7. **Թամբազյան Հ.**, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը: Գիրք Բ: – Երևան, «Նաիրի» հրատ. 2015: – 427 էջ:
8. **Սարգիսյան Բ.**, Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացույ վարք և մատենագրութիւնք: – Վենետիկ, տպ. Ս. Ղազարու, 1907:
9. **Քյոսեյան Հ.**, «Խորհրդապաշտական աստվածաբանություն»: Բուհական դասագիրք: – Երևան, ԵՊՀ հրատ., 2023. – 298 էջ:
10. Творения аввы Евагрия : Аскетические и богословские трактаты / Пер. [с древнегреч.], вступ. ст. [с. 5-23] и коммент. А.И. Сидорова; [Ред. Лега В.П., Троицкая Е.А.; Православ. Свято-Тихонов. Богослов. ин-т, Ин-т мировой лит. им. А.М. Горького Рос. АН]. - Москва : Мартис, 1994. - 362, [2] с.
11. **Лосский В. Н.** Боговидение. – Москва, АСТ. 2003. – 759 с.
12. **Минин П. М.** "Мистицизм и его природа" // http://krotov.info/library/13_m/in/in_2.htm

Շճան/Հանձնվել է՝ 26.11.2024
 Рецензирована/Գրախոսվել է՝ 03.12.2024
 Принята/Ընդունվել է՝ 10.12.2024